ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

22 դեկտեմբերի հինգշաբթի 2022
տպագրության ԺԱ տարի

185
(2665)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 160

2022 թվականին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանն իր ելույթներում պարբերաբար անդրադարձել է Լեռնային Ղարաբաղի բանակցային գործընթացին՝ հայտարարելով, թե նախկին իշխանությունները, համաձայնելով Մադրիդյան սկզբունքներին, ԼՂ-ն ճանաչել են Ադրբեջանի կազմում: Նա նաեւ իր տարբեր ելույթներում հայտարարել է, որ Մադրիդյան փաստաթղթով նախատեսվող՝ ԼՂ կարգավիճակի մասին հանրաքվեն անորոշ տեղում, ժամկետներում եւ մասնակիցներով պետք է անցկացվեր: Փաշինյանը պնդում էր նաեւ, թե Լաչինի միջանցքի լայնությունը բանակցված որեւէ փաստաթղթում չի նշվել,սակայն, ինչպես շատ է լինում, այս անգամ եւս Նիկոլ Փաշինյանի պնդումներն իրականությանը չեն համապատասխանում: Մասնավորապես, Լեռնային Ղարաբաղի վերջնական կարգավիճակի մասին հանրաքվեի մանրամասները հստակ սահմանված էին, որոնք սահմանափակում չէին դնում հանրաքվեին ներկայացվելիք հարցերի առումով, այդ թվում՝ Ադրբեջանից ԼՂ-ի անջատման: Ոչ միայն Մադրիդյան, այլեւ Կազանյան փաստաթղթերում նշվել է, որ Լեռնային Ղարաբաղի վերջնական կարգավիճակի մասին հանրաքվեն (պլեբիսցիտը) պետք է անցկացվի ԼՂԻՄ-ի բնակչության շրջանում՝ այնպիսի ազգային (էթնիկ) համամասնությամբ, ինչպիսին եղել է մինչեւ ղարաբաղյան հակամարտության սկիզբը՝ 1988 թվականը: Մինչեւ հակամարտության սկիզբը հայերը կազմել են ԼՂԻՄ-ի բնակչության գերակշիռ մեծամասնությունը՝ 76-77 տոկոս: ԼՂԻՄ-ում այդ ժամանակ բնակվել է 162 181 մարդ, այդ թվում՝ 123 076 հայ եւ 37 264 ադրբեջանցի: Բանակցված փաստաթղթերում նշվել է նաեւ Լաչինի միջանցքի լայնության մասին: Այսպես, ԵԱՀԿ Մինսկի խմբի ռուսաստանցի համանախագահ Վլադիմիր Կազիմիրովի հրապարակած՝ 1997-ին Մինսկի խմբի կողմից առաջարկված փուլային կարգավորման փաստաթղթում Լաչինի միջանցքի համար առաջարկվել է 20 կմ լայնություն:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանի եւ Տավուշի մարզի անտառտնտեսության պետ Միհեր Ղալթախչյանի մասնակցությամբ այս տարվա նոյեմբերի 25-ին ուշագրավ միջադեպ է տեղի ունեցել: Մարզում տարածված լուրերի համաձայն՝ այդ օրը մարզպետն ու անտառտնտեսության պետն անտառներից մեկում գողության դեպքի են ականատես եղել եւ որոշել են հետապնդել ենթադրյալ հանցագործին: Ըստ այդ նույն լուրերի՝ վերջիններս հետապնդել են անտառից իբր գողություն անող «Գազ 66» մակնիշի մեքենան, որը բեռնված է եղել փայտանյութով: Մեքենայի վարորդն էլ, տեսնելով, որ իրեն հետապնդում են, արագ է վարել մեքենան ու ընկել ձորը, ինչի հետեւանքով գանձաքարցի վարորդը մահացել է: Տխուր պատմությունն այսքանով չի ավարտվել. Տավուշի մարզի բնակիչների խոսքով՝ գանձաքարցիները, իմանալով իրենց հարազատի մահվան մասին, եկել են եւ հաշիվ պահանջել մեքենան հետապնդած մարզպետից եւ անտառտնտեսության տնօրենից: Արդյունքում սկսվել է քաշքշուկ, ու, ըստ Տավուշի բնակիչների, մարզպետ Հայկ Ղալումյանին եւ անտառտնտեսության պետ Միհեր Ղալթախչյանին քաղաքացիները բռնության են ենթարկել: Կողմերն ու իրավապահ համակարգը փորձում են թաքցնել պատմության այն դրվագը, որ այս ամենին մասնակից է եղել մարզպետը: Միայն հաստատում են վթարի եւ դրա հետեւանքով արձնագրված վարորդի մահվան հանգամանքը: Գրեթե ողջ մարզը գիտի այս դժբախտ պատմության մասին, սակայն «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ չկա հարուցված քրգործ կամ ներկայացված հաղորդում այս մասին: Իհարկե, չենք կարող պնդել, թե ՀՀ ոստիկանապետ Վահե Ղազարյանը հանցագործություն է թաքցնում, սակայն դեպքի մասին բարձրաձայնել է պետք՝ հնարավոր հանցագործության կոծկումը բացառելու համար:

⇨ էջ 3

ՀՀ ոստիկանությունը վերջերս բավականին ակտիվ է մեկ անձից կատարվող գնումների հարցում: Օրինակ՝ 30 մլն դրամ արժողությամբ պայմանագիր է ստորագրվել «Չեխ ավտո» ՍՊԸ-ի հետ: Այդ գումարով կատարվում է 150 Skoda Octavia ավտոմեքենաների սարքավորումների ընթացիկ նորոգում եւ պահպանում: Նշենք, որ Skoda Octavia ավտոմեքենաներն էլ ձեռք են բերվել «Չեխ ավտո» ՍՊԸ-ից, որը պատկանում է Քաղավիացիայի վարչության նախկին պետ Արտյոմ Մովսեսյանի ընտանիքին: 2020 թվականի հունվարից այս ընկերության սեփականատերը Ալբինա Մովսեսյանն է: Վերջինս ԿԱ քաղաքացիական ավիացիայի վարչության նախկին պետ Արտյոմ Մովսեսյանի կինն է: Իհարկե, սա առաջին դեպքը չէ, որ ոստիկանությունը Արտյոմ Մովսեսյանի ընտանիքին պատկանող ընկերությունից նման խոշոր գնում է կատարում: Այս ընկերությունը նախորդ տարի 140 հատ ավտոմեքենա է մատակարարել ոստիկանությանը: Պայմանագրի ընդհանուր արժեքը կազմել է 1 մլրդ 785 մլն դրամ: Ուշագրավ է, որ «Չեխ ավտո» ՍՊԸ-ն 1 մլն դրամի ավտոմեքենաների սպասարկման ծառայություններ է մատակարարել Կադաստրի կոմիտեին: 2017 եւ 2016 թվականներին տարբեր պայմանագրերով ծառայություններ է մատուցել ընկերության ներկայիս սեփականատիրոջ ամուսնու՝ Արտյոմ Մովսեսյանի ղեկավարած կառույցին՝ Քաղավիացայի կոմիտեին: Նիկոլ Փաշինյանը ընդդիմադիր իր կարգավիճակում դաժան քննադատում էր մեկ անձից կատարվող գնումները:



Կառավարությունը 2023-ի հունվարից կվերանայի այն կենսաթոշակառուների ցուցակները, որոնք 3 հազար դրամ թոշակի ավելացմամբ պայմանավորված՝ զրկվել էին ամսական նպաստից: «Ժողովուրդ» օարթերթը տեղեկացավ, որ ԱԺ-ից այս մասով լուրջ ճնշումներ են գործադրվել գործադրի վրա՝ պահանջելով վերանայել նպաստ ստանալու հնարավորությունից զրկված թոշակառուների ցուցակները: Թեեւ կառավարությունն այս որոշման մասին դեռեւս չի բարձրաձայնում (դա գուցե որպես Ամանորի նվեր են ուզում մատուցել՝ փիարի շրջանակներում), բայց «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ, ամենայն հավանականությամբ, եկող տարվա հունվարից սկսած՝ կվերականգնվի մոտ 3800 կենսաթոշակառուների նպաստը: Ավելին՝ կենսաթոշակառուները նաեւ 2022-ի նոյեմբեր ու դեկտեմբեր ամիսների համար չվճարված նպաստները կստանան. կուլիսներում խոսվում է այդ մասին: Քայլն, իհարկե, դրական է, սակայն չի բացառվում, որ իշխանության ներկայացուցիչներն այսկերպ փորձեն սիրաշահել թոշակառուներին ու, Փաշինյանի ասած, վերջիններիս համոզեն, թե ինչքան շատ են իրենք «սիրում բոլորին, հպարտանում բոլորով»: Իրականում Նիկոլ Փաշինյանի իշխանությունը խլել է թոշակառուների գումարը եւ հիմա փորձում է վերադարձը որպես մեծ ձեռքբերում մատուցել:

ԼԱՉԻՆԻ ՄԻՋԱՆՑՔ

ԿԱՐՄԻՐ ԳԾԵՐ ՊԵՏՔ Է ԼԻՆԵՆ

Մոտ մեկուկես ժամ տեւած քննարկման ընթացքում դեկտեմբերի 20-ին Լաչինի միջանցքում ստեղծված կացությանն անդրադարձան ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի մեկ տասնյակից ավելի պետությունների դիվանագետները, այդ թվում՝ բոլոր մշտական անդամները: Ֆրանսիայի ներկայացուցիչը պահանջում էր անհապաղ աղաչրջափակել Լաչինի միջանցքը եւ հնարավորություն տալ ՄԱԿ-ի կառույցներին մուտք գործել տարածաշրջան: Միացյալ Նահանգների ներկայացուցչի ելույթը նվիրված էր Հայաստանը Լեռնային Ղարաբաղին կապող ճանապարհի փակման թե՛ մարդասիրական եւ թե՛ քաղաքական հետեւանքներին:

Իսկ Հայաստանն էլ կոչ է անում ՄԱԿ-ի կառույցներին փաստահավաք առաքելություն ուղարկել Լեռնային Ղարաբաղ՝ տեղում ստեղծված իրավիճակին ծանոթանալու համար: Անցած գիշեր Նյու Յորքում պաշտոնական Երեւանի պահանջով հրավիրված ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի նիստի ընթացքում այդ մասին հայտարարեց կազմակերպությունում Հայաստանի մշտական ներկայացուցիչ Միեր Մարգարյանը:

Ազգային ժողովի «Պատիվ ունեմ» խմբակցության ղեկավար Հայկ Մամիջանյանն ասում է, որ ՄԱԿ-ը բարդ կառույց է, ու անվտանգության խորհրդի նիստի հայտարարությունները միանշանակ մեկնաբանել չի կարելի:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Հայկ Մամիջանյանը նշեց, որ ՄԱԿ-ի ամբիոնից հնչած հայտարարություններ կարեւոր, բայց ոչ 100 տոկոս արդյունք երաշավորող փաստեր կամ երեւույթներ են:

-Պարոն Մամիջանյան, ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդն Արցախի հարցն էր քննարկում, գնահատականները տարբեր են, հիմնականում իրավիճակին ճիշտ գնահատական տրվեց, կարծես թե: Այս մասով Ձեր գնահատականը կներկայացնե՞ք:

-Տեսե՛ք, ես կկրկնվեմ եւ կասեմ այն նախադասությունը, որ սովորաբար այսպիսի դեպքերում ասում եմ նաեւ միջազգային գործընկերներին. հայ-ադրբեջանական կոնֆլիկտի կամ Ղարաբաղյան հակամարտության համատեքստում շատ հեշտ է Հայաստանի կողմը բռնելը, որովհետեւ Հայաստանի կամ Ղարաբաղի կողմը բռնելն արդարության մասին է խոսում: Այն, ինչի մասին խոսել է Արարատ Միրզոյանը, խոսելով կոնսեսուսի մասին, կարելի է վերաձեւակերպել, որ առկա է միջազգային կոնսենսուս արդարության վերաբերյալ: Խնդիրը կայանում է նրանում, որ ՄԱԿ-ը բավականին բարդ եւ բազմաշերտ կառույց է՝ բազմաթիվ հատվող եւ հակընդդեմ շահերով եւ հետաքրքրություններով, ուստի ՄԱԿ-ի եւ մի շարք այլ մարմինների պարագայում հայտարարությունից գործողություն անցումը կամ քայլը կարող է երկար լինել: Դա կապված է թե՛ բարդությունից, թե՛ ժամանակից: Բնականաբար, համարում եմ, որ անհրաժեշտ է բարձր պահել Արցախի բլոկադայի հետ կապված Ադրբեջանի վրա միջազգային ճնշումը եւ տեսնել, թե վերջին փուլում որ գործիքը կաշխատի, իսկ աշխատեցնել պետք է բոլոր գործիքները:

-Հուսա՞լ, որ այս նիստից հետո ինչ-որ բան կփոխվի:

-Ես Ձեզ արդեն ասացի, որ ՄԱԿ-ը բավականին բարդ կառույց է, եւ շատ բարդ է կանխատեսել, թե այս ամենի արդյունքում ինչ կարող է տեղի ունենալ: Եվ բացարձակ միանշանակ չէ, որ այդ հայտարարությունը կամ դրա բացակայությունը կարող են արդյունքներ տալ: Իհարկե, դրանք կարեւոր երեւույթներ են, բայց ոչ հարյուր տոկոս երաշխավորող են: Ինձ համար ամենակարեւոր կետն այս ամբողջ ողբերգության եւ պատմության մեջ հետեւյալն է. արցախցիներն արդեն ցույց են տվել, որ թույլ չեն տա իրենց կենսական շահերի շուրջ բանակցություններ կամ առուծախ, առեւտուր: Կարծում եմ՝ հերթը Հայաստանինն է եւ պաշտոնական Երեւանինը՝ ցույց տալու, որ Հայաստանն ու Երեւանը ունեն կարմիր գծեր. դա այն է, որ Արցախը երբեք չի լինելու Ադրբեջանի կազմում, սակայն Հայաստանն ամեն կերպ փորձում է խուսափել եւ չասել այդ նախադասությունը: Այս ամենը բխում է մեր հռչակագրից, եւ այդ մոտեցումն անընկալելի է: Ես ասում եմ, որ բանակցություններ կան, սակայն չկան բանակցություններ, որտեղ Հայաստանը գնում է՝ այդ կարմիր գիծը որպես ելք ունենալով: Ադրբեջանը կարող է կրկին փորձել ստանալ ավելին Հայաստանից եւ Արցախից:

Զրուցեց ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆԸ

ՆԱԽԱԳԻԾ

ՄԱՐԶՊԵՏՆԵՐԻՆ ԿՀՍԿԵՆ

Կառավարության քաղաքականությունը մշակող եւ իրականացնող մարմինը պետք է համակարգի մարզպետների գործունեությունը: Մասնավորապես, առաջարկվում է փոփոխություն կատարել ««Տարածքային կառավարման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքում: Հիմնավորման մեջ նշվում է, թե նախագծերի ընդունման նպատակն է բարձրացնել մարզպետների եւ մարզպետների աշխատակազմերի գործունեության արդյունավետությունը՝ սահմանելով վերջիններիս հաշվետվողականության ավելի ճկուն եւ օպերատիվ մեխանիզմ:

Մասնավորապես, «Տարածքային կառավարման մասին» օրենքում նախատեսվում է սահմանել դրույթներ, որոնց համաձայն՝ Կառավարության քաղաքականությունը մշակող եւ իրականացնող մարմինը՝

1) մարզպետների գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով համակարգելու է մարզպետների ընթացիկ գործունեությունը, ինչպես նաեւ պետական կառավարման համակարգի այլ մարմինների հետ վերջիններիս աշխատանքները,

2) քննարկելու եւ համադրելու է տարածքների համաչափ զարգացումն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով եւ այլ միջոցներով նախատեսվող ծրագրերը,

3) իրավական հսկողություն է իրականացնելու մարզպետների ընդունած որոշումների նկատմամբ եւ անհրաժեշտության դեպքում դրանք ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ առաջարկություններ է ներկայացնելու վարչապետին,

4) իրականացնելու է մարզպետի աշխատակազմի գործունեության վերահսկողությունը,

5) լսելու է մարզպետի աշխատակազմի գործունեության մասին հաշվետվությունները, քննելու է գործունեության ստուգման արդյունքները:

Այսպիսով, մարզպետներին հնարավորություն է ընձեռնվելու նաեւ անմիջապես Կառավարության քաղաքականությունը մշակող եւ իրականացնող մարմնի միջոցով Կառավարության եւ վարչապետի քննարկմանը ներկայացնել իրենց իրավասությանը վերապահված հարցերը:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՆՄԱՆ ՄԱՆԴԱՏ ՉՈՒՆԻ

Դեկտեմբերի 12-ից առ այս պահը մի խումբ ադրբեջանցիներ բնապահպանական ակցիայի անվան տակ փակել են Հայաստանն Արցախին կապող միակ ճանապարհը: Արցախից հաղորդում են, որ ճանապարհի փակման պատճառով սննդամթերքի, մասնավորապես՝ հացի եւ ալյուրի, ինչպես նաեւ առաջին անհրաժեշտության այլ ապրանքների մատակարարումը դեպի տվյալ բնակավայրեր Արցախից չի իրականացվում: Ճանապարհը փակ է նաեւ շտապօգնության մեքենաների համար: Այս ընթացքում դատապարտող եւ Ադրբեջանին Լաչինի միջանցքը բացելու կոչեր եւ հայտարարություններ հնչեցին տարբեր երկրների եւ կազմակերպությունների կողմից: «Ժողովուրդ» օրաթերթն այս առնչությամբ զրուցել է նաեւ ռուսաստանցի քաղաքագետ Ստանիսլավ Տարասովի հետ: Նա անդրադարձավ այն քննադատություններին, որ առկա են ռուս խաղաղապահների առնչությամբ: «Ռուս խաղաղապահների կարգավիճակը հստակեցված չէ, եւ այդ պատճառով առաջանում են մի շարք խնդիրներ: Սակայն ես կարծում եմ, որ, ամեն դեպքում, բոլոր հարցերը պետք է լուծվեն քաղաքական-դիվանագիտական ճանապարհով, ոչ թե շանտաժի ու ճնշման միջոցով»,-նկատեց նա: Ըստ Տարասովի՝ կողմերից մեկը ակնհայտորեն գնում է սրացման, եւ հիմա, ըստ նրա, պետք է հասկանալ, ով է դրանով ավելի հետաքրքրված, ով է ուզում Հարավային Կովկասում լարվածության հերթական օջախ ստեղծել: Նրա խոսքով՝ ավելի տրամաբանական կլիներ, որ Հայաստանն ու Ադրբեջանը միմյանց հետ բանակցեին առանց միջնորդների ու կարողանային համաձայնության գալ, սակայն նման հնարավորություն այս պահին չի տեսնում:

ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԵՐ

Դեկտեմբերի 23-ին եւ 26-ին Ազգային ժողովի արտահերթ նիստեր կլինեն: Բանն այն է, որ կան դեռ հարցեր, որոնք պատգամավորները չեն հասցրել քննարկել եւ քվեարկել, եւ դրանք հաջորդ տարվան թողնելը նպատակահարմար չի համարվում: Ազգային ժողովի արտահերթ նստաշրջաններ գումարելու առաջարկությամբ հանդես է եկել կառավարությունը: Մենք տեղեկացանք նաեւ, թե ինչ հարցեր են քննարկվելու դեկտեմբերի 23-ին՝ ուրբաթ օրը հրավիրված ԱԺ արտահերթ նիստում: Հրատապ է համարվել ««Տարածքային կառավարման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին», ««Կառավարության կառուցվածքի եւ գործունեության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» եւ ««Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքում լրացում եւ փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթը: Այս նախագծերի փաթեթը խորհրդարանում անցնելու է միանգամից առաջին եւ երկրորդ ընթերցումներ, իսկ հիմնական զեկուցողն էլ լինելու է ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացման նախարարի տեղակալ Վաչե Տերտերյանը: Օրակարգում այլ նախագծեր եւս կան, որոնք անցնելու են միայն երկրորդ ընթերցում: Նկատենք՝ յուրաքանչյուր տարի լինում են դեպքեր, երբ հիմնական նստաշրջանի ավարտից հետո խորհրդարանականները չեն կարողանում միանգամից հանգստի գնալ, եւ ԱԺ ղեկավարությունը ՔՊ-ականներին զգուշացնում է՝ հեռու չգնալ, դեռ քվեարկություններ կան:

ՆՈՐ ՊԱՇՏՈՆԻ ԱՌԱՋԱՐԿ

ArmLur.am-ի տեղեկություններով՝ ԿԳՄՍ նախկին նախարար Վահրամ Դումանյանը ԿԳՄՍ նախարարի պաշտոնից ազատվելուց հետո այլ պաշտոնի ակնկալիքներ ունի իշխանությունից:

ArmLur.am-ը կապ հաստատեց Վահրամ Դումանյանի հետ՝ պարզելու համար, թե արդյոք նոր պաշտոնի առաջարկ ունի նախկին նախարարը, թե ոչ:

«Այս պահին նոր պաշտոնի այլ առաջարկներ չունեմ, նման հարց չկա: Մեկ շաբաթ է, ինչ ազատվել եմ պաշտոնից, հիմա հանգստանում եմ»,- նշեց նա:

Հարցին, թե ինչու նա ազատման դիմում ներկայացրեց վարչապետին, մեր զրուցակիցն ասաց, որ այդպես է նպատակահարմար գտել:

Հիշեցնենք, որ ավելի վաղ ArmLur.am-ը գրել էր, որ կրթության եւ գիտության նախարար Վահրամ Դումանյանն ազատվել է պաշտոնից, վերջինիս փոխարինում է նախկին փոխնախարար Ժաննա Անդրեասյանը:

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

2023 թվականի հունվարի 1-ից բոլոր իրավաբանական անձինք (անկախ կազմակերպաիրավական տեսակից) պարտավոր են Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն ներկայացնել իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր: Նշված պարտավորության ժամկետը լրանում է 2023 թվականի մարտի 1-ին: Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից օրենքով սահմանված ժամկետում իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ չներկայացնելը, համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169.29 հոդվածի, առաջացնում է վարչական պատասխանատվություն: Նախորդ տարիներին հայտարարագիր ներկայացրած անձինք եւս մինչեւ փետրվարի 20-ը պարտավոր են ներկայացնել տեղեկատվություն՝ նախորդ հայտարարագրում նշված տեղեկությունների արդիականության մասին, կամ պետք է ներկայացնեն փոփոխված հայտարարագիր: Համապատասխան տեղեկությունները սահմանված ժամկետում չներկայացնելը եւս առաջացնում է վարչական պատասխանատվություն:

ԹԱՔՑՆՈՒՄ ԵՆ

ԲՌՆՈՒԹՅՈՒՆ՝ ՄԱՐԶՊԵՏԻ ՆԿԱՏՄԱՄԲ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանի եւ Տավուշի մարզի անտառտնտեսության պետ Մհեր Ղալթախչյանի մասնակցությամբ ուշագրավ միջադեպ է եղել: Մարզում տարածված լուրերի համաձայն՝ այս տարվա նոյեմբերի 25-ին մարզպետն ու անտառտնտեսության պետն անտառներից մեկում գողության դեպքի են ականատես եղել եւ որոշել են հետապնդել ենթադրյալ հանցագործին:

Նույն լուրերի համաձայն՝ վերջիններս հետապնդել են անտառից իբր գողություն անող «Գազ 66» մակնիշի մեքենան, որը բեռնված է եղել գողացված փայտանյութով: Մեքենայի վարորդը, տեսնելով, որ իրեն հետապնդում են, արագ է վարել մեքենան ու ընկել է ձորը, ինչի հետեւանքով գանձաքարցի վարորդ Նորայր Միրզոյանը մահացել է: Այսքանով, սակայն, դժբախտ պատմությունը չի ավարտվել. Տավուշի մարզի բնակիչների խոսքով՝ գանձաքարցիները, իմանալով իրենց հարազատի մահվան մասին, եկել են եւ հաշիվ պահաջել մարզպետից ու անտառտնտեսության տնօրենից, ինչից հետո սկսվել է քաշքշուկ, ու, ըստ Տավուշի բնակիչների, մարզպետ Հայկ Ղալումյանի եւ անտառտնտեսության պետ Մհեր Ղալթախչյանի նկատմամբ բռնություն է կիրառվել:

«Ժողովուրդ» օրաթերթը բնակիչներից հասած տեղեկությունները փորձեց պարզել բոլոր կողմերից եւ սկսեց հետաքննություն: «Ժողովուրդ»-ը կապ հաստատեց Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանի հետ, որը, լսելով իրեն ծեծի ենթարկելու մասին մեր հարցը, հետաքրքրվեց՝ ով է ասել, ապա վստահ հերքեց՝ նշելով, որ իրեն ոչ ոք չի ծեծել, ինքը որեւէ վնասվածք չունի: «Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց, ըստ բնակիչների, հաջորդ ծեծի ենթարկված՝ Անտառտնտեսության պետ Մհեր Ղալթախչյանի հետ, որն այդպես էլ մեր զանգերին չպատասխանեց, հրաժարվեց հեռախոսով զրուցել մեզ հետ եւ միայն գրավոր նամակին արձագանքեց՝ գրելով. «Անկեղծ լինեմ, անհարմար է, որ կհավատաք նման անհեթեթություններին: Չի եղել նման բան»: Հերթը հասավ Գանձաքար համայնքի ղեկավար Վարդգես Դովլաթբեկյանին, որը, լսելով դեպքի մասին, կցկտուր նշեց, թե ինքն առաջին անգամ է լսում այդ մասին, ու անջատեց հեռախոսը եւ այլեւս չպատասխանեց մեր հեռախոսազանգերին:

Կողմերի հերքումներից հետո որոշեցինք հասկանալ, թե այս դեպքի մասին ինչ է հայտնի իրավապահ մարմիններին:

Դիմեցինք ՀՀ ոստիկանապետ Վահե Ղազարյանին եւ արեցինք հետեւյալ հարցադրումները.

1. Արդյոք եղե՞լ է նման դեպք, որ վարորդը գողացված փայտանյութով վթարի է ենթարկվել ու մահացել:

2. Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ վթարի դեպքով կատարվել է քննություն: Ի՞նչ եք պարզել, եւ ինչի՞ արդյունքում է վարորդը մահացել:

3. Ըստ մեզ հասած լուրերի՝ այս դեպքից հետո գանձաքարցիները, իանալով, որ իրենց հարազատը մահացել է մարզպետի ու անտառի տնօրենի հետապնդման հետեւանքով, ծեծի են ենթարկել նրանց երկուսին:

ՀՀ ոստիկանությունից ստացանք հետեւյալ պատասխանը. «25.11.2022թ. ժամը 20:45-ի սահմաններում Գանձաքար-Իծաքար ավտոճանապարհին փայտանյութով բարձված «Գազ 66» մակնիշի առանց հաշվառման համարանիշի ավտոմեքենան ձորը գլորվելու, դրա հետեւանքով հիշյալ ավտոմեքենայի վարորդ(Ն.Մ)-ի մահվան փաստով ՀՀ ՔԿ Տավուշի մարզային քննչական վարչությունում նախաձեռնվել է քրեական վարույթ, եւ կատարվում է նախաքննություն:

Համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի պահանջների՝ Ձեր գրությամբ հայցվող ամբողջական տեղեկատվությունը ստանալու համար կարող եք դիմել հիշյալ դեպքով քրեական վարույթն իրականացնող մարմնին»:

Ասել է թե՝ ոստիկանությունը շրջանցեց բռնության մասին տեղեկությունը եւ ծանր բեռը թողեց ՀՀ քննչական կոմիտեի ուսերին: «Ժողովուրդ» օրաթերթը դիմեց ՀՀ քննչական կոմիտեի նախագահ Արգիշտի Քյարամյանին: Կոմիտեից հայտնեցին. «2022 թվականի նոյեմբերի 25-ին՝ ժամը 22:45-ի սահմաններում, Տավուշի մարզի Գանձաքար-Իծաքար ավտոճանապարհին՝ 4-րդ ոլորանից դեպի Գանձաքար գյուղի ուղղությամբ Նորայր Միրզոյանի կողմից վարած՝ փայտանյութով բարձված «Գազ 66» մակնիշի տրանսպորտային միջոցը գլորվել է ձորը, որի հետեւանքով Ն. Միրզոյանը տեղում մահացել է: ՀՀ քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննական վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածի 2-րդ մասի եւ 387-րդ առաջին մասի հատկանիշներով նախաձեռնվել է 38124222 քրեական վարույթը:

Հարցադրմամբ հիշատակված՝ Տավուշի մարզպետի եւ անտառտնտեության պետի կողմից հիշյալ տրանսպորտային միջոցը հետապնդելու, ինչպես նաեւ Տավուշի մարզի Գանձաքար գյուղի բնակիչների կողմից վերջիններիս նկատմամբ բռնություն գործադրելու վերաբերյալ քրեական վարույթում որեւէ տվյալ առկա չէ»:

Այսինքն՝ քրգործում ոչինչ չկա, ինչպես ենթադրվում էր:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ոստիկանությունը եւ նախաքննական մարմինը մարզպետ Ղալումյանի եւ անտառտնտեության պետ Ղալթախչյանի հանդեպ բռնություն կիրառելու հանգամանքը խնամքով թաքցրել են, քանի որ այդպիսով պիտի նաեւ մի խումբ գանձաքարցիների պատժեին, որոնց հարազատը մահացել է, մյուս կողմից՝ մեղադրյալի աթոռին կհայտնվեին մարզպետ Ղալումյանն ու անտառտնտեության պետ Ղալթախչյանը, քանի որ նրանք միգուցե փորձել են հացագործություն կանխել, սակայն մարդ է մահացել:

Որպեսզի կողմերից որեւէ մեկը չտուժի, այդ մասով տվյալները գործում չկան: Ասել է թե՝ չկա գրանցված հանցանք, չկա նաեւ հանցանքի բացահայտման անհրաժեշտություն:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐ

Խորհրդարանը դեկտեմբերի 21-ին շարունակել է արտահերթ նստաշրջանի աշխատանքը:

Ինչպես տեղեկացնում են ԱԺ մամուլի ծառայությունից, ԱԺ հաշվիչ հանձնախմբի նախագահ Նարեկ Բաբայանը ներկայացրել է Վճռաբեկ դատարանի դատավորների գաղտնի քվեարկության արդյունքները: Ըստ այդմ՝ Արման Թովմասյանն ընտրվել է Վճռաբեկ դատարանի վարչական պալատի դատավոր, Դավիթ Վեքիլյանը՝ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի կոռուպցիոն հանցագործությունների քննության դատական կազմի դատավոր, իսկ Արման Կուրեխյանը՝ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի քաղաքացիական գործերի քննության դատական կազմի դատավոր:

ՄԻԱՁԱՅՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ուրուգվայի Սենատը միաձայն հայտարարություն է ընդունել՝ կոչ անելով Ադրբեջանին ապահովել ազատ տեղաշարժը Լեռնային Ղարաբաղը Հայաստանի հետ կապող միջանցքով:

Այս մասին «Թվիթեր»-ում հայտնում է Ուրուգվայում Հայ ազգային խորհրդի ներկայացուցչությունը:

«Մի քանի որոպե առաջ Ուրուգվայի Սենատը միաձայն ընդունել է հայտարարություն՝ կոչ անելով Ադրբեջանին կատարել իր միջազգային պարտավորությունները եւ ապահովել ազատ տեղաշարժը Լեռնային Ղարաբաղը Հայաստանի հետ կապող միջանցքով՝ վերջ դնելով ճնշումներին»,- ասվում է կազմակերպության հայտարարության մեջ:

ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄ

Արցախի Հանրապետության նախագահ Արայիկ Հարությունյանը դեկտեմբերի 21-ին ստորագրել է հրամանագիր Սամվել Արծրունու Ավետիսյանին Արցախի Հանրապետության առողջապահության նախարար նշանակելու մասին: Առողջապահության նոր նախարարի նշանակման մասին «Ֆեյսբուք»-ի ուղիղ եթերում հայտնել է նաեւ Արցախի պետական նախարար Ռուբեն Վարդանյանը:

«Շնորհակալ եմ պարոն Ավետիսյանին, որը Հայաստանից եկել է Արցախ՝ առողջապահության ոլորտը զարգացնելու: Նա մեծ փորձ ունի, ու վստահ եմ՝ դառնալով մեր թիմի անդամներից մեկը՝ կարեւորագույն ոլորտներից մեկն առավել կզարգացնի»,- նշել է Ռուբեն Վարդանյանը:

ՀԱՐԿԵՐ

ԿԱԼԱՆԱՎՈՐՎԵԼ Է 4 ԱՆՁ

Արդեն տեղեկացվել է, որ ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտում 2022թ. նոյեմբերի 19-ին ՀՀ քրեական օրենսգրքի 290-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերով, 48-290-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերով նախաձեռնված, այնուհետեւ ՀՀ քննչական կոմիտեին փոխանցված քրեական վարույթի շրջանակներում ՀՀ ԱԱԾ եւ ՀՀ ՔԿ աշխատակիցների կողմից իրականացված մեծածավալ օպերատիվ-հետախուզական միջոցառումների, քննչական եւ վարութային գործողությունների արդյունքում բացահայտվել է տնտեսվարող ընկերության կողմից իրականությանը չհամապատասխանող հայտարարագրերի հիման վրա, առանց պատշաճ մաքսային հսկողության մեծածավալ ապրանքներ ՀՀ ներկրման տեւականորեն կիրառված հանցավոր մեխանիզմ:

Մասնավորապես, պարզվել է, որ ՀՀ քաղաքացիներ, եղբայրներ Ռ. Կ.-ն, Կ.Կ.-ն եւ Հ. Կ.-ն, փաստացի ղեկավարելով այլ անձի անվամբ հիմնադրված եւ տնօրինած ՍՊ ընկերության գործունեությունը, տարբեր անձանց պատվերով Թուրքիայի Հանրապետությունից Վրաստանի եւ Հայաստանի պետական սահմանով 2022թ. օգոստոս-հոկտեմբեր ամիսներին ՀՀ են ներկրել առնվազն մի քանի տասնյակ տոննա հագուստ: Սակայն նախնական համաձայնությամբ եւ միասնական դիտավորությամբ, մաքսային վճարները առանձնապես խոշոր չափերով չվճարելու նպատակով ապրանքների մաքսային հայտարարագրերի մեջ պատասխանատու անձի միջոցով ապրանքների տեսակների մասին մտցրել են խեղաթյուրված տվյալներ եւ խաբեության այլ դրսեւորմամբ ներկրված հագուստը մաքսազերծել են միրգ-բանջարեղենի անվան տակ: Արդյունքում տնտեսվարողը չարամտորեն խուսափել է ՀՀ պետբյուջե առանձնապես խոշոր չափերի հարկերի եւ տուրքերի վճարումից:

Քրեական վարույթի շրջանակներում 4 անձ անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածով ձերբակալվել են:

Ձեռք բերված տվյալների հիման վրա՝ վարույթն իրականացնող մարմնի կողմից միջնորդություն է ներկայացվել հսկող դատախազին՝ 4 անձի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 48-290-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերով նախատեսված հանցավոր արարք կատարելու համար քրեական հետապնդում հարուցելու վերաբերյալ: Միջնորդությունը 2022թ. դեկտեմբերի 19-ի որոշմամբ բավարարվել է: ՀՀ քննչական կոմիտեի Վաղարշապատի քննչական բաժնի քննիչի կողմից նշված անձանց ներկայացվել են մեղադրանքներ, եւ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան միջնորդություն է ներկայացվել՝ նրանց նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ:

Դատարանի՝ դեկտեմբերի 20-ի որոշմամբ՝ միջնորդությունները բավարարվել են, նշված անձինք կալանավորվել են:

Քրեական վարույթով շարունակվող նախաքննությամբ ձեռնարկվում են բոլոր միջոցները՝ դեպքի հանգամանքները լիարժեք պարզելու, նշված հանցավոր մեխանիզմում հնարավոր ներգրավված այլ անձանց, այդ թվում նաեւ պաշտոնատար անձանց գործողություններին իրավական գնահատական տալու ուղղությամբ:

ԼՈՒՐԵՐ

ԵՐԵԽԱՆԵՐԸ ՀԻՎԱՆԴԱՆՈՑՈՒՄ ԵՆ

Արցախը Հայաստանին կապող միակ ճանապարհը Ադրբեջանի կողմից արգելափակելու պատճառով ԱՀ առողջապահության նախարարության ենթակայության տակ գործող բուժհաստատություններում շարունակում են դադարեցված մնալ պլանային վիրահատությունները:

«Արեւիկ» բուժմիավորումում 8 երեխա գտնվում է ռեանիմացիոն եւ նորածնային բաժանմունքներում:

Նրանցից 4 ամսական փոքրիկի առողջական վիճակը (ում մոտ ախտորոշվել էր «Վիսցերալ լեյշմանիոզ») շարունակում է մնալ ծանր, եւ նա ստանում է համապատասխան բուժում:

«Հանրապետական բժշկական կենտրոն»-ում 11 բուժառու գտնվում է ռեանիմացիոն բաժանմունքում, որից 4-ը ծայրահեղ ծանր վիճակում են. բժիշկների կողմից կատարվում է հնարավորը հիվանդների վիճակը կայունացնելու համար: ԱՀ առողջապահության նախարարությունը ձեռնարկում է հնարավոր բոլոր միջոցները շրջափակման պատճառով ստեղծված իրավիճակը պատշաճ հաղթահարելու համար: Արցախից Երեւան տեղափոխված սրտային պաթոլոգիայով պացիենտի աորտոկորոնար շունտավորումն ավարտվել է բարեհաջող: Պացիենտը տեղափոխվել է վերակենդանացման բաժանմունք, առողջական վիճակը մասնագետները կայուն են գնահատում:

ԴԱՆԱԿԱՀԱՐՈՒԹՅՈՒՆ

Դեկտեմբերի 19-ին՝ ժամը 23.50-ին, «Գավառ» բժշկական կենտրոնից ոստիկանության Գավառի բաժին հաղորդում էր ստացվել, որ «կրծքավանդակի ձախ կեսի կտրած-ծակած վերք, տրավմատիկ շոկ» ախտորոշմամբ բուժօգնության է տեղափոխվել Կարմիրգյուղ գյուղի բնակիչ 23-ամյա մի երիտասարդ: Նա հայտնել էր, որ վնասվածքը ստացել է փողոցում ընկնելու հետեւանքով:

Ոստիկանության Գավառի բաժնի քրեական հետախույզների ձեռնարկած միջոցառումների արդյունքում, սակայն, պարզվել է, որ նա մարմնական վնասվածքը ստացել էր դեկտեմբերի 19-ի ժամը 20.00-ի սահմաններում Գավառ քաղաքի Հացառատ թաղամասի եւ Գանձակ բնակավայրի միջնամասում գավառցի մի խումբ երիտասարդների հետ տեղի ունեցած վիճաբանության ժամանակ:

Ժամը 03.30-ին «Գավառ» բժշկական կենտրոնից ոստիկանություն երկրորդ հաղորդումն է ստացվել. ազդրի ծակած-կտրած վերքով բուժօգնության էր տեղափոխվել Կարմիրգյուղի 40-ամյա մի բնակիչ: Բաժնի ծառայողների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ նա վնասվածքը ստացել էր նույն վիճաբանության ժամանակ:

Ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության եւ Գավառի բաժնի ծառայողների համատեղ ձեռնարկած միջոցառումների եւ բացատրական աշխատանքի արդյունքում դեկտեմբերի 20-ին Գավառի բաժին է ներկայացել գավառցի 23-ամյա մի երիտասարդ եւ խոստովանել է, որ հիվանդանոց տեղափոխվածներին ինքն է դանակահարել: Նա նաեւ ներկայացրել է հանցագործության գործիք ծալովի դանակը:

23-ամյա երիտասարդը եւ կազմված փաստաթղթերը ներկայացվել են Գեղարքունիքի մարզային քննչական վարչություն:

ԼՈՒՐԵՐ

ՄԵՔԵՆԱՆ ՇՐՋՎԵԼ Է

Դեկտեմբերի 20-ին՝ ժամը 18:32-ին, Ճգնաժամային կառավարման ազգային կենտրոն ահազանգ է ստացվել, որ Երեւանի Իսակովի պողոտայում տեղի է ունեցել ՃՏՊ. բախվել են ավտոմեքենաներ, որոնցից մեկը շրջվել է, անհրաժեշտ է եղել փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր է մեկնել ԱԻՆ ՓԾ Երեւան քաղաքի փրկարարական վարչության հրշեջ-փրկարարական ջոկատից մեկ մարտական հաշվարկ:

Պարզվել է, որ բախվել են Mercedes-Benz CLS (վարորդ՝ Գ. Ա.) եւ Mercedes-Benz C (վարորդ՝ Ռ. Ս.) մակնիշների ավտոմեքենաները, ինչի հետեւանքով վերջինս շրջվել է:

Փրկարարները հոսանքազրկել են ավտոմեքենան, փակել գազի բալոնի փականը եւ ուղղել Mercedes-Benz C մակնիշի ավտոմեքենան:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

Ոստիկանության Նոր Նորքի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքում համացանցով խաբեության մասին տեղեկություն էր ստացվել: Էլեկտրոնային կայքերից մեկի միջոցով անհայտ անձը ավտոմեքենաների պահեստամասեր ներկրելու պատրվակով քաղաքացիներից խաբեությամբ գումար էր վերցրել:

Իրացնելով տեղեկությունները՝ ոստիկանության Նոր Նորքի քրեական հետախույզները ձեռնարկեցին օպերատիվ-հետախուզական միջոցառումներ: Դեկտեմբերի 17-ին նրանք հայտնաբերեցին, հանցանք կատարելու կասկածանքով ձերբակալեցին ու Ավան եւ Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժին ներկայացրին Նոր Նորքի 8-րդ զանգվածի 26-ամյա մի բնակչի:

Ոստիկանները կասկածներ ունեն, որ Carshop.am կայքի միջոցով պահեստամասեր պատվիրած եւ 26-ամյա տղամարդու հանցավոր գործողություններից տուժած այլ անձինք եւս հնարավոր է լինեն, որոնք կարող են դիմել ոստիկանության Նոր Նորքի կամ մոտակա բաժին կամ զանգահարել 1-02 հեռախոսահամարով: Փաստի առթիվ նախաձեռնվել է քրեական վարույթ:

ՀՐԴԵՀ՝ ՏԱՆԻՔՈՒՄ

Ճգնաժամային կառավարման ազգային կենտրոն դեկտեմբերի 21-ին՝ ժամը 11:40-ին, ահազանգ է ստացվել, որ Երեւանի Թբիլիսյան խճուղում գտնվող շինհրապարակում հրդեհ է բռնկվել: Պարզվել է, որ հրդեհը բռնկվել է «Էլնոր» գործարանի տանիքում (մոտ 200 քմ):

Հայտարարվել է հրդեհի բարդության «1-Բիս» կանչ. դեպքի վայր են մեկնել ԱԻՆ ՓԾ Երեւան քաղաքի փրկարարական վարչության հրշեջ-փրկարարական ջոկատներից եւս երեք մարտական հաշվարկ, մեկ ավտոսանդուղք, Հրդեհաշիջման եւ փրկարարական աշխատանքների կազմակերպման բաժնի եւ Ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնի օպերատիվ խմբերը:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ դեկտեմբերի 20-ից 21-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 35 դեպք, որոնցից 2-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԲՆԱԿԻՉ ՉԿԱ

Դիլիջան խոշոր համայնքի 6 գյուղերից է Դիլիջան քաղաքից 25 կմ հեռավորությամբ գտնվող Խաչարձանը: Այն նախկինում եղել է ադրբեջանաբնակ, կոչվել է Փոլադ: Խաչարձանի վարչական ղեկավար Գագիկ Շահնազարյանը հայտնեց, որ ներկայումս գյուղում ապրում է մոտ 350 մարդ, որոնք Ադրբեջանի Դաշքեսանի, Շամխորի, Շամախիի շրջաններից են վերաբնակվել: Խաչարձանի միջնակարգ դպրոցում այժմ սովորում է 55 աշակերտ: Գ. Շահնազարյանն ասաց, որ գյուղն ունի մշակույթի տուն, որը վերանորոգման կարիք ունի: Խաչարձանում չկա փոստային բաժանմունք; Խաչարձանի բնակիչների համար կարեւոր է գյուղի ոռոգման ցանցի ընդլայնումը. ոռոգման ջուր է ստանում գյուղի տարածքի կեսը: Նմանապես խնդիր է գիշերային լուսավորության ցանցի ընդլայնումը. լուսավորության ցանցն ընդգրկում է գյուղի տարածքի մի մասը: Խաչարձանում ասֆալտապատված է ճանապարհի՝ մինչեւ գյուղապետարան տանող հատվածը: Տավուշի մարզպետարանի ինտերնետային կայքում որպես Դիլիջան համայնքի բնակավայրեր նշված են նաեւ Գեղատափը եւ Ճերմակավանը: Գեղատափը նախկինում Մուրթել է կոչվել, այն գտնվում է Խաչարձան գյուղից մոտ 15 կմ հեռավորությամբ, իսկ Ճերմակավանը, որը նախկինում Աղքիլիսա է կոչվել, Խաչարձանից հեռու է 7 կմ: Խաչարձանի վարչական ղեկավարը հայտնեց, որ Ճերմակավանում արդեն մի քանի տարի է՝ ոչ ոք չի ապրում: Գեղատափում նախկինում ապրել են Շահումյանից բռնագաղթած 18 ընտանիք, այժմ ընդամենը 2 ընտանիք է բնակվում, որոնք այդտեղ անասուններ են պահում: Ջարմանալի է, որ Գեղատափը եւ Ճերմակավանը Տավուշի մարզպետարանի ինտերնետային կայքում որպես բնակավայրեր են նշված, սակայն որպես բնակավայրեր նշված չեն մարզի այլ բնակավայրեր, որտեղ թվով ավելի շատ ընտանիքներ են բնակվում, օրինակ՝ Նոյեմբերյան խոշոր համայնքի Կոզմանը, Գոմշավարը, Շլորկուտը եւ այլն:

ՀԱՎԵԼԱՎՃԱՐԻՑ ՋՐԿՎԵԼ ԵՆ

Լոռու մարզում տեղակայված «Դուցի» զորամասի պայմանագրային զինծառայողները, որոնք պաշտպանում են Տավուշի մարզի առաջնագիծը, տարեմուտին կանգնել են ֆինանսական լուրջ խնդրի առաջ: Արդեն մեկ տարի շարքային պայմանագրային զինծառայողները 127 հազար դրամ ռոճիկի հետ ամեն ամիս ստանում էին 90-100 հազար դրամ հավելվճար՝ կախված իրենց զբաղեցրած հաստիքներից: Այժմ սահմանապահ պայմանագրային զինծառայողներին հայտնել են, որ նրանք հավելավճար չեն ստանա, իսկ դիրքերում մարտական հերթապահության համար նախատեսված 60 հազար դրամն էլ կստանան մինչեւ եկող տարվա հունվարի 10-ը: Առաջնագիծը պաշտպանող պայմանագրային զինծառայողների մեջ մեծ դժգոհություն է առաջացել, քանզի նրանցից շատերը բանկերում չմարված վարկեր ունեն. նրանք նախատեսում էին հավելավճարի գումարով իրենց ընտանիքների համար ամանորյա գնումներ անել: Առաջնագիծը պաշտպանող պայմանագրային զինծառայողներից շատերը որոշել են դիրքերից իջնելուց հետո դիմումներ գրել, զինծառայությունից դուրս գալ:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԼԱՉԻՆԻ ՄԻՋԱՆՑՔ

ՄԱԿ-Ի ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

ՄԱԿ ԱԽ-ն քննարկում է Լաչինի միջանցքում ստեղծված իրավիճակը: Քննարկումը տեղի է ունենում Հայաստանի դիմումի հիման վրա: Հայաստանի եւ Ադրբեջանի ներկայացուցիչները եւս մասնակցում են նիստին:

Ներկայացնում ենք ելույթներից հատվածներ: «Դեկտեմբերի 12-ից սկսած դադարեցվել է տեղաշարժը դեպի Լեռնային Ղարաբաղ, քանի որ Ադրբեջանը բողոքների զանգվածային արշավ է մեկնարկել Լաչինի միջանցքի երկայնքով՝ շրջափակելով միակ ճանապարհը դեպի Լեռնային Ղարաբաղ»,- Լաչինի միջանցքի շուրջ ստեղծված իրավիճակի ՄԱԿ-ի ԱԽ նիստին հայտարարեց ՄԱԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցիչ Միեր Մարգարյանը:

«Խնդրի անհապաղությունը պայմանավորված է իրավիճակով, որը զարգանում է որպես մարդասիրական ճգնաժամ: Այն ստեղծվել է Ադրբեջանի կողմից՝ որպես ապօրինի շրջափակում ԼՂ բնակչության դեմ՝ ուղղակիորեն խախտելով իր հանձնառությունները, մասնավորապես՝ 2020 թվականի նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությունը, ինչպես նաեւ միջազգային պարտավորությունները: Դեկտեմբերի 12-ից սկսած՝դադարեցվել է տեղաշարժը դեպի Լեռնային Ղարաբաղ, քանի որ Ադրբեջանը բողոքների զանգվածային արշավ է մեկնարկել Լաչինի միջանցքի երկայնքով՝ շրջափակելով միակ ճանապարհը դեպի Լեռնային Ղարաբաղ: Սա արվում է՝ ուղղակիորեն խախտելով եռակողմ հայտարարության 6-րդ պարբերությունը, ըստ որի՝ Լաչինի միջանցքը պետք է կապ ապահովի ԼՂ-ի եւ ՀՀ-ի միջեւ՝ մնալով ՌԴ խաղաղապահ ուժերի հրամանատարության ներքո, եւ Ադրբեջանի Հանրապետությունը պետք է ապահովի քաղաքացիների, ավտոմեքենաների եւ բեռների ապահով շարժը Լաչինի երկայնքով: Բնապահպանական մտահոգությունների մտացածին պատրվակով Լաչինի միջանցքում ապօրինի շրջափակում կազմակերպելով՝ Ադրբեջանը աղետալի վիճակի է հասցրել բնակչությանը: Այս մարդասիրական, կյանքի ճանապարհի արգելափակումը առաջացրել է բազմաթիվ խաթարումներ»,- նշեց նա:

Մարգարյանի խոսքով՝ ճանապարհը փակվելու հետեւանքով 1100 Արցախի քաղաքացիներ մնացել են ճանապարհին՝ չկարողանալով իրենց տուն հասնել. «Երեխաները չեն կարողանում իրենց ծնողների մոտ գնալ, բուժվողների տեղափոխումն է խաթարվել, դարձել անհնարին, որի հետեւանքով մեկ քաղաքացի է մահացել: Առկա է մի շարք մատակարարումների պակաս: Ջեռուցման խնդիրը ազդել է երեխաների դասապրոցեսի վրա՝ նրանց զրկելով կրթության իրավունքից»:

Նրա խոսքով՝նման մասշտաբի ակցիաները առանց պետության աջակցության անհնար է պատկերացնել, ընդ որում՝ նրանք այնպիսի պահանջներ են ներկայացնում, որոնք հակասում են եռակողմ հայտարարության դրույթներին:

ՄԱԿ-ում ՀՀ մտական ներկայացուցիչը նշեց, որ Ադրբեջանի այն պնդումը, թե լուծել է ԼՂ հարցը, ակնհայտ ցեղասպանական նկրտումներ է պարունակում:

Միեր Մարգարյանը ՄԱԿ-ի ԱԽ խորհրդին կոչ արեց քայլեր ձեռնարկել, որպեսզի Ադրբեջանը հարգի եռակողմ հայտարարության դրույթները եւ բացի միջանցքը: ՄԱԿ-ում Ֆրանսիայի ներկայացուցիչը նշել է. «Վերջին շրջանի իրադարձությունները շատ են մեզ մտահոգել: Լեռնային Ղարաբաղի մեկուսացումը Լաչինի միջանցքի փակման հետեւանքներից մեկն է: Ազատ տեղաշարժի սահմանափակում է առկա, որն անընդունելի է: Մարդասիրական հետեւանքներն օրեցօր վատթարանում են: Ֆրանսիան կոչ է անում ի կատար ածել եռակողմ հայտարարությամբ հանձն առած պայմանավորվածությունները, եւ պետք է երաշխավորված լինի մարդկանց ու ապրանքների տեղաշարժի անվտանգությունը երկու ուղղություններով»: Ալբանիայի ներկայացուցիչ. «Ի գիտություն ենք ընդունել Հայաստանի ու Ադրբեջանի դեսպանների՝ խորհրդին դիմումները: Չնայած տարբեր տեսանկյուններից, մենք գնահատում ենք այն փաստը, որ երկու կողմերն էլ պատրաստ են երկխոսության: Համաձայնությունները պետք է հարգվեն, եւ երկու կողմերը պետք է դրանք ի կատար ածեն: Ապրանքների եւ մարդկանց անվտանգ տեղաշարժը պետք է ապահովվի միջանցքի երկայնքով: Երկխոսությունը խնդիրների լուծման լավագույն ուղին է»:

Չինաստանի ներկայացուցիչ. «Մենք հավատում ենք, որ վեճերը պետք է լուծվեն երկխոսությամբ: ՌԴ-ն շատ մեծ աշխատանք է կատարել, եւ հույս ունենք, որ այդ վեճը կհանգուցալուծվի շատ արագ»:

ՄԱԿ-ում ՄԹ ներկայացուցիչ. «Միացյալ Թագավորությունը խորապես մտահոգված է Լաչինի միջանցքի փակմամբ: Մենք ուրախ ենք, որ գազամտակարարումը վերականգնվել է, բայց շարունակում ենք կոչ անել, որ անմիջապես վերաբացվի Լաչինի միջանցքը: Հատկապես ձմեռվա ամիսներին մարդասիրական ծանր հետեւանքների վտանգ է առաջացել»:

ՄԱԿ-ում ՌԴ ներկայացուցիչ. «Մեզ մտահոգում են Լաչինի միջանցքի արգելափակման լուրերը: Մենք ակնկալում ենք, որ տրանսպորտային հաղորդակցությունը մոտ ապագայում պետք է վերականգնվի: Մենք կոչ ենք անում Ադրբեջանին եւ Հայաստանին զսպվածություն ցուցաբերել եւ հարել եռակողմ համաձայնագրերին»:

ՄԱԿ-ում ԱՄՆ ներկայացուցիչ. «Մենք կոչ ենք անում Ադրբեջանի կառավարությանը եւ այլ կողմերին, որոնք պատասխանատու են միջանցքի անվտանգության համար, մարդասիրական եւ առեւտրային օգտագործման համար հնարավորինս արագ ապաշրջափակել Լաչինի միջանցքը»: Օրեր առաջ ՄԱԿ ԱԽ աշխատանքները լուսաբանող Security Council Report (SCR) անկախ հետազոտական կենտրոնն էր հաղորդել, թե ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի անդամները ուրբաթ առավոտյան՝ Լիբիայի վերաբերյալ խորհրդակցություններից հետո, քննարկելու են իրավիճակը Լեռնային Ղարաբաղում՝ Ֆրանսիայի առաջարկով:

11-ՐԴ ՕՐ

ԴԵՊՐԱՅՔ ԱՐՑԱԽ ՉԻ ՀԱՄՆՈՒՄ

Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքը փակելու հետեւանքով Հայաստանից ամեն օր 400 տոննա սննդամթերք ու դեղորայք հնարավոր չի լինում հասցնել Արցախ. այս մասին հաղորդագրություն է տարածել Արցախի տեղեկատվական շտաբը:

«Արդեն 11 օր է՝ Արցախն ամբողջական շրջափակման մեջ է: Դեկտեմբերի 12-ի առավոտյան ադրբեջանական կողմը բնապահպանական կեղծ պատրվակներով փակել է Լաչինի միջանցքը, որն Արցախը Հայաստանի եւ արտաքին աշխարհի հետ կապող միակ ճանապարհն է:

Ադրբեջանական գործողությունների հետեւանքով Արցախի 120.000 բնակչությունը, որից 30.000-ը երեխաներ են, հայտնվել է հումանիտար ճգնաժամի մեջ: 1100 քաղաքացի, որից 270-ը՝ անչափահաս, ճանապարհի արգելափակման հետեւանքով տուն վերադառնալու հնարավորություն չունի:

Արցախի բժշկական հաստատությունների վերակենդանացման բաժանմունքներում գտնվող ավելի քան երկու տասնյակ առողջական լուրջ խնդիրներ ունեցող հիվանդներ, որից 13-ը երեխաներ են, Հայաստան անհապաղ տեղափոխման կարիք ունեն: 350 հիվանդներ չեն կարողանում բուժում ստանալ Հայաստանում: Արցախում ժամանակավորապես դադարեցվել են բոլոր պլանային վիրահատությունները:

Հայաստանից ամեն օր 400 տոննա սննդամթերք ու դեղորայք հնարավոր չի լինում հասցնել Արցախ: Տրանսպորտային ամբողջական շրջափակումը սպառնում է սննդի, դեղորայքի եւ վառելիքի պակասով»,- ասված է հաղորդագրության մեջ:

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 19 ՃՏՊ. 1 մարդ զոհվել է, 28-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

ՌՈՒՄՆԵՐԸ ՇԱՏԱՑԵԼ ԵՆ

Ամանորին արտերկիր մեկնող ռուսաստանցիների շրջանում ամենատարածված ուղղություններից են Հայաստանը, Թուրքիան եւ Ղազախստանը: Այս մասին հաղորդում է ТАСС գործակալությունը, որի տրամադրության տակ են հայտնվել Яндекс Путешествия ծառայության ուսումնասիրության տվյալները: «Անցյալ տարվա համեմատությամբ՝ դեպի մերձավոր արտասահմանի երկրներ ուղեւորությունների պահանջարկն աճել է 32%-ով, իսկ ընդհանուր առմամբ արտասահման՝ 4%-ով»,- նշել են փորձագետները: Ծառայության տվյալներով՝ ճանապահորդություն պլանավորողների մեծամասնությունը (83%) տոներին ուղղորությունների կմեկնի Ռուսաստանի տարբեր շրջաններ: Ռուսաստանի ներքին ուղղություններից Ամանորին առավել պահանջված են Մոսկվան, Սանկտ Պետերբուրգը եւ Սոչին, արտասահմանյաններից՝ Թուրքիան, Հայաստանը եւ Ղազախստանը: Իսկ, ընդհանուր առմամբ, եթե հաշվի չառնենք մերձավոր արտասահմանի երկրները, առավել մեծ պահանջարկ ունեն Թուրքիան, ԱՄԷ-ն, Եգիպտոսը, Սերբիան եւ Իսրայելը: Ինչպես եւ անցյալ տարի, ամանորյա ճանապարհորդությունները Ռուսաստանում եւ արտասահմանում կտեւեն մոտ մեկ շաբաթ: Ռուսաստանի Դաշնությունում երկու ուղղությամբ ավիատոմսի միջին գինը մեկ անձի համար, նախորդ տարվա համեմատությամբ, աճել է 18%-ով՝ մինչեւ 14 հազար ռուբլի: Դեպի արտասահման եւ հետադարձ տոմսի գինը աճել է 79%-ով՝ մինչեւ 50 հազար ռուբլի: Ռուսաստանում տոնական օրերին հյուրանոցային համարների ամրագրման միջին արժեքը կազմում է շուրջ 35 հազար ռուբլի, արտասահմանում՝ 42,5 հազար ռուբլի. հայտնել են ընկերությունից:

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄԵՑՎԵԼ Է

ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի որոշմամբ՝ կասեցվել է անհատ ձեռնարկատեր Մելանյա Զաքարյանին պատկանող մսամթերքի տնայնագործական արտադրական գործունեությունը (Շիրակի մարզ, ք. Գյումրի): Որոշման համար հիմք են ծառայել ՍԱՏՄ Շիրակի մարզային կենտրոնի տեսուչների իրականացրած ստուգման արդյունքները, որոնք փաստել են՝ տնտեսավարողը գործունեությունը կազմակերպել է տան խոհանոցում, որտեղ ապահովված չի եղել սննդամթերքի արտադրության գործընթացում օգտագործվող տեխնոլոգիական սարքավորումների եւ գույքի մաքրման, լվացման, ախտահանման գործընթացների պարբերականությունը, չի բացառվել խաչաձեւ աղտոտման հնարավորությունը, արտադրական տարածքի հատակի, պատերի եւ առաստաղի մակերեւույթները պատրաստված չեն եղել անջրանցիկ, լվացվող, ախտահանում ապահովող նյութերից, պատուհանները չեն ունեցել միջատապաշտպան ցանցեր: Վերահսկող մարմինը սահմանել է ժամկետ հայտնաբերված խախտումները վերացնելու համար: Տնային պայմաններում արտադրական գործունեություն ծավալելն արգելվում է:

ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄՆԵՐ

ԿՅԱՆՔ ԿՏԱՆ ԱՆՄՇԱԿ ՀՈՂԻՆ

Գեղարքունիքի մարզի Գեղարքունիք գյուղի միջնակարգ դպրոցում տեղի է ունեցել «Դպրոցական լավագույն մինի այգի 2022թ.» մրցույթի հաղթողների պարգեւատրման արարողությունը: Հյուրընկալ դպրոցը զբաղեցրել է 1-ին հաղթող տեղը:

Արդեն երկրորդ տարին է, ինչ ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագիրն (ՊՀԾ) իր գործընկերների՝ «Դպրոցական սնունդ եւ երեխաների բարեկեցություն» հիմնարկի (ԴՍԵԲ) եւ ՌԴ Ճյուղային սննդի ինստիտուտի հետ համատեղ իրականացնում է «Դպրոցական լավագույն մինի այգի» մրցույթը, որին մասնակցել են Հայաստանի տարբեր դպրոցներ:

Մրցույթը, որը «Դպրոցական սնունդ» ծրագրի մի մասն է, խթանում է դպրոցական այգիների ստեղծումը եւ երեխաների մեջ վաղ տարիքից սերմանում հետաքրքրություն օրգանական գյուղատնտեսության նկատմամբ: «Դպրոցական սնունդ եւ բարեկեցություն» հիմնարկի պաշտոնակատար Անի Թորոսյանի խոսքով՝ մրցույթը նպատակ ունի բազմազանեցնել դպրոցական ճաշացանկը, կյանք տալ դպրոցի անմշակ հողին, երեխաներին ծանոթացնել գյուղատնտեսական աշխատանքների հետ, ինչպես նաեւ ջանք թափել, տեսնել իրենց աշխատանքի արդյունքը եւ գնահատվել դրա համար:

ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի «Դպրոցական սնունդ» ծրագրի ղեկավար Մարիա Մուրադյանն իր հերթին շեշտել է, որ ծրագիրը դարձել է կրթական լայն հարթակ, որն առողջ սննդի գաղափարախոսության շուրջ միավորում է դպրոցներին, համայքներին ու ծնողներին, ինչպես նաեւ նպաստում է դպրոցների եւ համայնքների զարգացմանը: Նրա խոսքով՝ մրցույթի մրցանակները պետք է ուղղվեն տվյալ այգու կամ «Դպրոցական սնունդ» ծրագրի բարելավմանը: Օրինակ՝ հաղթող դպրոցը որոշել է՝ կաթիլային ոռոգման համակարգ է անցկացնելու այգում եւ ավարտելու է ջերմոցի կառուցման աշխատանքները:

Միջոցառման ընթացքում հաղթողներին հանձնվել են հավաստագրեր, որից հետո դպրոցները կիսվել են օրգանական այգի մշակելու իրենց հաջողության պատմությամբ եւ աշխատանքային հետաքրքիր փորձառությամբ: Հաղթող դպրոցը կստանա 3000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ այգին բարեկարգելու եւ դպրոցական սնունդը բարելավելու համար: Ստեփանավանի թիվ 2 (Լոռու մարզ) դպրոցը, զբաղեցնելով երկրորդ տեղը, կստանա չորանոց՝ իր բերքից չրեր արտադրելու համար, իսկ երրորդ տեղը զբաղեցրած Նոր Գեղիի (Կոտայքի մարզ) դպրոցը՝ սառցարան՝ այգում աճեցված արտադրանքը սառեցնելու եւ պահելու համար:

Գեղեցիկ ու գրագետ կազմակերպված այգիների ցանկը, սակայն, չի սահմանափակվել հաղթող եռյակով. կազմակերպիչներն ավելացրել են եւս երկու անվանակարգ: «Լավագույն էկոլոգիական նախագիծ» անվանակարգում հաղթանակի դափնիները բաժին են հասել Վանաձորի թիվ 8 հիմնական դպրոցին (Լոռու մարզ), իսկ «Լավագույն գիտական մոտեցում» անվանակարգում հաղթող է ճանաչվել Նորաշենի Ռ.Հարությունյանի անվան միջնակարգ դպրոցը (Արագածոտնի մարզ): Այս դպրոցներն արժանացել են խրախուսական մրցանակների:

Մրցույթն իրականացվել է երկու փուլով. առաջինում դպրոցները ներկայացրել են մրցույթի մասնակցության հայտեր (55 դպրոց), երկրորդ փուլին, որի հիմնական պահանջն էր ուղարկել ամբողջական փաթեթներ՝ պահպանելով մրցույթի կանոնները, 24 դպրոց է մասնակցել, որոնց միջեւ կատարվել է հաղթողների ընտրությունը:

Ընտրող հանձնաժողովը ձեւավորվել է տեղական եւ միջազգային վեց կազմակերպությունից՝ ներառյալ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը: Դպրոցները գնահատելիս մեծապես կարեւորվել է այգիները որպես կրթական հարթակ օգտագործելու եւ երեխաներին այգու պլանավորման, պահպանման եւ խնամքի աշխատանքների մեջ ներգրավելու կարողությունը:

Մրցույթին մասնակցած բոլոր 24 դպրոցներն արժանացել են մասնակցության շնորհակալագրերի՝ դպրոցական անձնակազմի եւ սովորողների նվիրվածության, բացառիկ ջանքերի եւ նորարար մոտեցումների համար:

Միջոցառման ընթացքում նաեւ տեղի է ունեցել «Դպրոցական սնունդ» ազգային ծրագրի եւ «Դպրոցական սնունդ եւ երեխաների բարեկեցություն» հիմնարկի աշխատանքները ներկայացնող նորաստեղծ պաշտոնական կայքի շնորհանդեսը:

ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ

«ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ

Հայաստանի Հանրապետության դատախազությունը նախաձեռնել է «Օրինականություն» գիտագործնական պարբերականի բարեփոխումներ՝ ուղղված տպագրվող հոդվածին ներկայացվող պահանջների եւ պարբերականի բաղադրականության փոփոխմանը, ինչպես նաեւ պարբերականը միջազգային հայտնի շտեմարանների չափանիշներին համապատասխանեցնելուն:

Դատախազությունից հայտնում են, որ, գլխավոր դատախազի տեղակալ Անահիտ Մանասյանի համակարգմամբ, բարեփոխումներն ընթանում են մի քանի ուղղություններով՝ կանոնադրություն, խմբագրական խորհրդի կազմ, հոդվածներին ներկայացվող չափանիշներ, տպագրման թույլատրվող հոդվածների գիտականություն, տպագրման ժամանակացույց եւ պարբերականություն, պարտադիր եւ գաղտնի գրախոսության ինստիտուտ եւ այլն:

Այսուհետ «Օրինականություն» գիտագործնական պարբերականի խմբագրական խորհրդի անդամ կարող են դառնալ միջազգային չափանիշներին համապատասխանող շտեմարաններում տպագրված հոդվածներ եւ առնվազն իրավաբանական գիտությունների թեկնածուի աստիճան ունեցող մասնագետները:

Հիմք ընդունելով միջազգային լավագույն փորձը՝ քայլեր են ձեռնարկվում ընդլայնելու խմբագրական խորհրդի անդամների աշխարհագրությունը՝ կազմում ներառելով օտարերկրացի իրավաբան-գիտնականների:

Խմբագրական խորհրդի կազմում ընդգրկվելու համար արդեն իսկ իրենց պատրաստակամությունն են հայտնել միջազգային հեղինակություն ունեցող մի շարք իրավաբաններ:

Դատախազությունն առաջիկայում կհրապարակի խմբագրական խորհրդի կազմը:

Հաշվի առնելով հոդվածներին ներկայացվող չափանիշների փոփոխությունը, ինչպես նաեւ պարտադիր գրախոսման ինստիտուտի ներդնումը՝ «Օրինականություն» գիտագործնական պարբերականն այսուհետ կհրապարակվի տարին երկու անգամ:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ԿՈՄՊՈԶԻՏՈՐ

ԷԴՎԱՐԴ ՄԻՐԶՈՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄՐՑՈՒՅԹ՝ ԴԻԼԻՋԱՆՈՒՄ

Միրզոյանական հոբելյանական 10-րդ մրցույթն իր տեսակով կլինի աննախադեպ. առաջին անգամ մրցույթը կանցկացվի երկու քաղաքում՝ Երեւանում եւ Դիլիջանում:



Շուրջ 3 օր մասնակիցները կանցկացնեն Դիլիջանի Էդվարդ Միրզոյանի անվան կոմպոզիտորների ստեղծագործական տանը: Ի տարբերություն նախորդ տարիների՝ այս տարի 2 տարիքային խմբերում էլ մրցույթը կանցկացվի երկու փուլով: Առաջին փուլում, որը տեղի կունենա Երեւանում, ավագ խմբի (14-18 տարեկան) մասնակիցները պետք է ներկայացնեն անսամբլային ստեղծագործություն (2-ից 4 գործիքի համար (ցանկացած)՝ առավելագույնը 10 րոպե տեւողությամբ), իսկ կրտսեր խմբի (մինչեւ 13 տարեկան) մասնակիցները՝ 1 երգ՝ գրված ցանկացած գործիքի եւ ձայնի համար (տողերի հիմքում՝ հայ հեղինակի հայալեզու բանաստեղծություն), որի առավելագույն տեւողությունը չպետք է գերազանցի 5 րոպեն:

Երկրորդ փուլում, որը տեղի կունենա Դիլիջանում, մասնակիցները պետք է ներկայացնեն ցանկացած գործիքի համար գրված 1 մենանվագ ստեղծագործություն. կրտսեր խմբի մասնակիցները պետք է ներկայացնեն մինչեւ 5 րոպե տեւողությամբ, իսկ ավագ խմբի մասնակիցները՝ մինչեւ 10 րոպե տեւողությամբ ստեղծագործություն: Գալա համերգը մրցույթի պատմության մեջ առաջին անգամ կկայանա Երեւանից դուրս՝ Դիլիջանի Բեթհովենի անվան համերգասրահում: Մրցույթի բոլոր մասնակիցները, ավանդույթի համաձայն, ստանալու են խրախուսական նվերներ, պատվոգրեր, մրցանակային հորիզոնականներ զբաղեցրած մասնակիցները՝ նաեւ անվանական գավաթներ, իսկ հաղթող մասնակիցները՝ նաեւ դրամական պարգեւ: Դրամական պարգեւներ կստանան մրցանակային հորիզոնականներ զբաղեցրած մասնակիցների ուսուցիչները:

Հայտերի ընդունման վերջնաժամկետը 2023 թվականի մայիսի 5-ն է:

Նախագիծն իրականանում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության աջակցությամբ՝ Հայաստանի կոմպոզիտորների միության նախաձեռնությամբ:

ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ

ՓՈՓԽՈՒԹՅՈՒՆ՝ «ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ» ՀԱՄԵՐԳԱՍՐԱՀՈՒՄ

Կառավարության որոշմամբ գումար է հատկացվել «Արամ Խաչատրյան» համերգասրահի գույքի վերանորոգման համար:



«2023թ. կնշվեն Արամ Խաչատրյանի ծննդյան 120-ամյակը եւ մեծանուն կոմպոզիտորի անունը կրող համերգասրահի հիմնադրման 70-ամյակը: Այդ կապակցությամբ արտերկրում եւ Հայաստանում կանցկացվեն բազմաթիվ համերգներ, ցուցահանդեսներ եւ այլ նշանակալի միջոցառումներ, որոնց մասնակցելու նպատակով Հայաստան են ժամանելու անվանի երաժիշտ-կատարողներ, դիրիժորներ, արվեստագետներ, երաժշտական խմբեր:

Կարեւորելով առաջիկա հոբելյանները հավուր պատշաճի նշելու անհրաժեշտությունը՝ գործադիրը ԿԳՄՍՆ 2022 թվականի բյուջեի տնտեսված միջոցներից 225 մլն դրամ գումար է հատկացրել համերգասրահի բազկաթոռների ընթացիկ վերանորոգման նպատակով, որը թույլ կտա ապահովելու հանդիսատեսի հարմարավետությունը եւ համերգասրահի գեղագիտական տեսքը»,- նշված է ԿԳՄՍ նախարարության տարածած հաղորդագրության մեջ:

Մեծանուն կոմպոզիտորի անունը կրող համերգասրահը, որի շենքը համարվում է նաեւ պատմամշակութային հուշարձան, իր գոյության 70 տարիների ընթացքում վերանորոգվել է ընդամենը 2 անգամ. 1981-83 թթ.-ին շենքը լիովին վերակառուցվել եւ նորացվել է, բեմը վերազինվել է ժամանակակից հարմարանքներով, տեղադրվել են 1400 նոր բազկաթոռներ, իսկ 2003 թվականին «Լինսի» հիմնադրամի աջակցությամբ շենքը, ճեմասրահն ու բեմը կրկին վերանորոգվել են, սակայն բազկաթոռները չեն փոխվել:

Համերգասրահի բազկաթոռներն այժմ գտնվում են անմխիթար վիճակում. վնասված են գրեթե բոլոր նստատեղերի ծալվող մեխանիզմները, ինչը լրացուցիչ աղմուկի պատճառ է դառնում եւ համերգների ընթացքում բավական մեծ անհարմարություն ստեղծում: Հատկացված միջոցներով խնդիրը կկարգավորվի:

Նաեւ նշվում է, որ Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի բարերար Լուիզ-Սիմոն Մանուկյանի դուստրը՝ Ալիս Մանուկյանը, հանդիպումների ընթացքում բազմիցս շեշտել է, որ պետական համանման աջակցության առկայության դեպքում իր ղեկավարած հիմնադրամը նպատակադրված է մեծացնելու կառույցին հատկացվող աջակցության ծավալները:

Համերգասրահի բազկաթոռների վերանորոգումը պետք է կատարվի աստիճանական փոխարինումով, որպեսզի չխաթարվի դահլիճի բնականոն գործունեությունը:

ԼՈՒՐԵՐ

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻՑ ԳՈՀ Է

Հայաստանի հունահռոմեական ոճի ըմբշամարտի հավաքականի գլխավոր մարզիչ Արմեն Բաբալարյանը գոհ է հունահռոմեական ոճի ըմբշամարտի առաջնության արդյունքներից:

«Հայաստանի այս առաջնությունում տարբեր քաշային կարգերում հաղթեցին նաեւ երիտասարդ ըմբիշներ, որոնց հնարավորություն կտանք միջազգային այլ մրցաշարերում: Հիմնական քաշային կարգերում ծավալվեց լուրջ պայքար: Հաղթողներ դարձան նաեւ կրտսեր տարիքային հավաքականների ներկայացուցիչներ»,- ասել է մասնագետը:

Մարզչի խոսքով՝ այս առաջնությանը չմասնակցելու իրավունք ունեին հավաքականի երկու առաջատարները՝ Մալխաս Ամոյանը եւ Արթուր Ալեքսանյանը: 82 կգ քաշային կարգում մրցաշարին չէր մասնակցում Կարապետ Չալյանը:

Հայաստանը ներկայացնող ըմբիշներն անցնող տարում նվաճել են 56 մեդալ: Բոլոր տարիքային խմբերում Հայաստանն ունի Եվրոպայի եւ աշխարհի չեմպիոններ:

Հունվար ամսվա մեկնարկին հունահռոմեական եւ ազատ ոճի ըմբշամարտի հավաքականները ուսումնամարզական հավաքի միջոցով կսկսեն նախապատրաստվել սպասվող մրցաշարերին:

ԿՀԵՌԱՆԱ ՊԱՇՏՈՆԻՑ

ԱՄՆ բիզնես մագնատ, ձեռնարկատեր, Twitter սոցիալական հարթակի սեփականատեր Իլոն Մասկը հայտարարել է, որ կհեռանա ընկերության ղեկավարի պաշտոնից, երբ իրեն փոխարինող գտնի:

«Ես կհրաժարվեմ գործադիր տնօրենի պաշտոնից, հենց գտնեմ մեկին, ով բավական հիմար կգտնվի եւ կստանձնի այս գործը: Դրանից հետո ես կղեկավարեմ ծրագրային ապահովման եւ սերվերների խմբերը», - գրել է նա:

Այսպես է Մասկն արձագանքել Twitter-ում իր անցկացրած հարցման արդյունքներին, որոնց հրապարակումից հետո ավելի քան մեկ օր նա լռում էր այդ թեմայի շուրջ:

Ինչպես ավելի վաղ հայտնել էինք, սոցիալական հարթակի օգտատերերի քվեարկության արդյունքի համաձայն՝ Մասկը պետք է հրաժարվի ընկերության ղեկավարի պաշտոնից: 17,5 միլիոն օգտատերերի 57,5 %-ը դրան կողմ էր քվեարկել, 42,5 %-ը՝ դեմ:

Ի դեպ, Bloomberg գործակալությունը հայտնում է, որ Tesla, SpaceX եւ Twitter ընկերությունների սեփականատեր Իլոն Մասկը 2022 թ.-ին կորցրել է գրեթե 122,6 մլրդ դոլար, ինչը գերազանցում է 2021 թ.-ին նրա վաստակած գումարը: Մասկի կարողությունը կազմում է մոտ 147,7 մլրդ դոլար, ինչը վերջին երկու տարիների համար ամենափոքր թիվն է: Forbes-ի ամենահարուստ մարդկանց վարկանիշային ցուցակում Մասկն օրերս կորցրել էր առաջին հորիզոնականը՝ իր տեղը զիջելով Louis Vuitton Moet Hennessy ընկերության նախագահ Բեռնար Առնոյին:

● Դեկտեմբերի 25-ին Երեւանի պետական կամերային թատրոնում տեղի կունենա Cabaret Restart ներկայացումը: Տոմսերի արժեքը՝2000-6000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՐՑ. Ո՞վ է համարվում տուժողի իրավահաջորդը:
Զարինե Լազարյան (36 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Տուժողի իրավահաջորդ է ճանաչվում նրա մերձավոր ազգականներից մեկը, որը ցանկություն է հայտնել քրեական գործով վարույթում իրականացնել մահացած կամ իր կամքն արտահայտելու ունակությունը կորցրած տուժողի իրավունքները եւ պարտականությունները: Տուժողի մերձավոր ազգականին նրա իրավահաջորդ ճանաչելու մասին որոշումն ընդունում է հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը կամ դատարանը՝ նրա խնդրանքով: Համապատասխան խնդրանքով դիմած մի քանի մերձավոր ազգականներից տուժողի իրավահաջորդի ընտրությունն իրականացնում է դատախազը կամ դատարանը: Տուժողի իրավահաջորդ ճանաչված անձն իրավունք ունի քրեական գործով վարույթի ցանկացած պահին դադարեցնել իր լիազորությունները:

ՀՀ քննչական կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Տուժողի իրավահաջորդը քրեական գործով վարույթին մասնակցում է տուժողի փոխարեն եւ ունի վերջինիս իրավունքները եւ պարտականությունները, բացի ցուցմունքներ տալու եւ տուժողի անձից անբաժանելի այլ իրավունքներից եւ պարտականություններից: Տուժողի իրավահաջորդն իրավունք չունի հաշտվել կասկածյալի եւ մեղադրյալի հետ ու հետ վերցնել տուժողի ներկայացրած բողոքը:

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս են պարզաբանում դժբախտ դեպքերի, մասնագիտական հիվանդությունների ծառայողական քննությունները:
Լուսինե Սարիբեկյան (28 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Կազմակերպությունում մասնագիտական հիվանդությունների եւ դժբախտ դեպքերի պատճառները պարզելու նպատակով անցկացվում է ծառայողական քննություն: Մասնագիտական հիվանդությունները եւ դժբախտ դեպքերը ենթակա են պարտադիր հաշվառման գործատուի կողմից: Մասնագիտական հիվանդությունների եւ դժբախտ դեպքերի հաշվառման եւ ծառայողական քննության կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Տուժողը կամ նրա ներկայացուցիչը սահմանված կարգով կարող է մասնակցել աշխատանքի ժամանակ դժբախտ դեպքի կամ մասնագիտական հիվանդության ծառայողական քննությանը, իրավունք ունի ծանոթանալու դժբախտ դեպքի կամ մասնագիտական հիվանդության ծառայողական քննության նյութերին, ստանալ դժբախտ դեպքի կամ մասնագիտական հիվանդության ծառայողական քննության ակտը, իսկ ակտին համաձայն չլինելու դեպքում ծառայողական քննության արդյունքները կարող են բողոքարկել վարչական եւ (կամ) դատական կարգով:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից



Լեզվի կոմիտեն ամփոփում է հայերենի՝ 2022 թվականի «Տարվա բառ»-ը ընտրելու քվեարկությունը: «Ընտրության համար առաջարկվել էր 12 բառ (այբբենական կարգով), որոնցից Լեզվի կոմիտեի առցանց հետեւորդները քվեարկությամբ որոշել են «Տարվա բառ»-ը:

Հաղթել է ԳԻՏԱՐԲՈՒՔ բառը (այս բառի օգտին քվեարկել է մասնակիցների 30%-ը):

Գիտարբուքը միջոցառում է, որի շրջանակում մարդիկ հավաքվում են «գիտությամբ արբենալու համար», այլ կերպ ասած՝ հրավիրվում են գիտնականներ, եւ սրճարանում՝ ազատ ու անկաշկանդ միջավայրում, անցկացվում են գիտական քննարկումներ, խոսվում է գիտության մասին: Բառը նորակազմ է, բառարանային գրանցում չունի: Ուշագրավ է, որ առաջին տեղում գիտությանը, գիտական կյանքին առնչվող բառն է:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **21.12.2022**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: